# ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 2.97

## N ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-28/18

ք. Երևան «05» 05 2018թ.

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Վարմէքս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 13 203 400(տասներեք միլիոն երկու հարյուր երեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա

Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| **«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ** | **«Վարմէքս» ՍՊԸ** |
| **Երևան-42, Ի. Գասպարյան 33** | **Երևան, Տիգրան Մեծի 46 4** |
| **Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ** | **Հ/Հ 2050022329031001 ՀՀ դրամ** |
| **ԱՇԻԲ «Զվարթնոց» մսն.** | **Ինեկոբանկ** |
| **ՀՎՀՀ 01216144** | **ՀՎՀՀ 00407187** |
| **Գլխ. տնօրեն** | **Տնօրեն** |
| -------------------------Ա.Գասպարյան | -------------------------Ս. Խաչատրյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
«05» 05 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 31442100/14 | *Կուտակիչ մարտկոցներ՝ հերմետիկ EXIDE* GNB Industrial power | *Sonnenschein* *Գերմանիա* | Կապարա թթվային հերմետիկ կուտակիչ ՈՒնակություն – 60 Աժ Լարում – 12 Վոլտ Չափերը - 250 x 160 x 170 մմ Ելունները 8մմ հեղյուս - մանեկով, կամ այլ կերպ (ավտոմոբիլային ելուններ) Ծառայության ժամկետը – 5 տարի Շահագործման միջավայրի ջերմաստիճանը՝ -20°C → +60 ° C Արտադրության եվ պիտանելիության ժամկետների նշումով Արտադրման տարեթիվը՝ 2018թ.-ից ոչ շուտ: Փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 168000 | 672000 | 4 | ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերության պահեստ | 4 | 30.06.2018 թ. |
| 2 | 31442100/13 | Կուտակիչ մարտկոցներ՝ 105 Աժ Exide Industries LTD | ***INDEX*** *Հնդկաստան* | Լարումը ոչ պակաս քան 12Վ Ունակությունը ոչ պակաս քան 105Աժ Մեկնարկի հոսանքը ոչ | հատ | 49000 | 49000 | 1 | | 1 | 30.06.2018 թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պակաս 900Ա<br>Սեղմակները կոնաձև<br>Չափերը<br>353x175x190մմ(երկ.xլայ ն.xբարձր)<br>բևեռների դիրքը -/+ (0)<br>(մեջընկած)<br>Ապրանքի արտադրման, և կամ թողարկման ժամկետը մատակարարման պահին պետք է լինի ոչ ավել քան 3(երեք) ամիս, նոր` չօգտագործված:<br>Մարտկոցները պետք է ունենան աշխատունակության ցուցիչ(индикатор).<br>Նշված բարձրությունը պետք է լինի սեղմակների(клеммы) հետ միասին (սեղմակները` հավասար կամ բարձրությունը չգերազանցող),<br>Ծծմբաթթվի լցոնման անոթների խցանները բացվող: | | | | | | | |
| 3 | 31442100/6 | Կուտակիչ մարտկոցներ` 190 Աժ Johnson Controls | ***Varta Գերմանիա*** | Լարումը ոչ պակաս քան 12Վ<br>Ունակությունը ոչ պակաս քան 190Աժ<br>Մեկնարկի հոսանքը ոչ պակաս 1250Ա<br>Սեղմակները կոնաձև<br>Չափերը<br>510x220x210մմ(երկ.xլայ ն.xբարձր) | հատ | 169000 | 845000 | 5 | | 5 | 30.06.2018 թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բևեռների դիրքը +/-(0) Ապրանքի արտադրման, և կամ թողարկման ժամկետը մատակարարման պահին պետք է լինի ոչ ավել քան 3(երեք) ամիս, նոր՝ չօգտագործված: Մարտկոցները պետք է ունենան աշխատունակության ցուցիչ(индикатор). Նշված բարձրությունը պետք է լինի սեղմակների(клеммы) հետ միասին (սեղմակները՝ հավասար կամ բարձրությունը չգերազանցող), Ծծմբաթթվի լցոնման անոթների խցանները բացվող: | | | | | | | |
| 4 | 31442100/12 | Կուտակիչ մարտկոցներ՝ AGM Shenzhen center power tech co ltd | *DT Չինաստան* | Չսպասարկվող հերմետիկ մարտկոց, վերալիցքավորվող: 12 Վ, 50 Ա/ժ, պատրաստված dryfit կամ AGM տեխնոլոգիայով, արտադրման տարեթիվը՝ 2018թ. ոչ ուշ: Չափերը՝ 353x175x190մմ-ից ոչ ավել: Երաշխիքային ժամկետը մատակարարման օրվանից 1 տարուց ոչ | հատ | 89000 | 712000 | 8 | | 8 | 30.06.2018 թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պակաս: | | | | | | | |
| 5 | 31442100/25 | Կուտակիչ մարտկոցներ՝ VRLA AGM EH Europe GmbH | *GENESIS* ***Ֆրանսիա*** | P3D Կայանի, UPS-ի մարտկոց 12Վ 13Աժ ստացիոնար, կապարաթթվային, հերմետիկ, գերճնշման փականի կարգավորմամբ՝ չսպասարկվող: Տեխնոլոգիա - VRLA AGM Չափսերը (երկարություն x լայնություն x բարձրություն) -175 x 83 x 129 մմ Քաշը, կգ - ոչ պակաս քան 4,0 M6 - սեղմակով **Երաշխիքային ժամկետը՝ հանձման - ընդունման ԱԿՏԸ ստորագրման օրվանից - մեկ տարի:** Եվրոպական հավաքում: ԱՐՏԱԴՐՈՂԻ ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ ներկայացվում է հանձնման - ընդունման ԱԿՏի հետ: **Արտադրման տարեթիվը՝ 2018թ.** 12V13Ah EPX (12Վ 13 Աժ) կամ համարժեքը Փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 109000 | 654000 | 6 | | 6 | 30.06.2018 թ. |
| 11 | 31442100/22 | Կուտակիչ մարտկոցներ՝ UPS-ի 5Աժ Shenzhen center power tech co ltd | *BOCTOK* ***Չինաստան*** | UPS-ի համար՝ չսպասարկվող, կապարաթթվային, սնուցման լարումը՝ 12 Վ, ունակությունը՝ 5 Ա/ժ: Չափերը - 70 x 90 x 110 մմ: Ֆաստոն սեղմակով: Արտադրման տարեթիվը՝ | հատ | 8600 | 137600 | 16 | | 16 | 30.06.2018 թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2018թ.-ից ոչ շուտ: Փաթեթավորումը՝ գործարանային: | | | | | | | |
| 15 | 31442100/17 | Կուտակիչ մարտկոցներ՝6 5 Ud Exide Industries LTD | **INDEX** *Հնդկաստան* | Լարումը ոչ պակաս քան 12Վ<br>Ունակությունը ոչ պակաս քան 65 Աժ<br>Մեկնարկի հոսանքը ոչ պակաս 630Ա<br>Սեղմակները կոնաձև<br>Չափերը 245x175x190մմ(երկ.xլայն.xբարձր)<br>բևեռների դիրքը +/- (1)<br>Ապրանքի արտադրման, և կամ թողարկման ժամկետը մատակարարման պահին պետք է լինի ոչ ավել քան 3(երեք) ամիս, նոր՝ չօգտագործված:<br>Մարտկոցները պետք է ունենան աշխատունակության ցուցիչ(индикатор).<br>Նշված բարձրությունը պետք է լինի սեղմակների(клеммы) հետ միասին (սեղմակները՝ հավասար կամ բարձրությունը չգերազանցող),<br>Ծծմբաթթվի լցոնման անցքերի խցանները բացվող: | հատ | 34000 | 68000 | 2 | | 2 | 30.06.2018 թ |
| 23 | 31442100/5 | Կուտակիչ մարտկոցներ՝6. 5 Աժ-7.5 Աժ Shenzhen center power tech co ltd | ВОСТОК *Չինաստան* | Մարտկոց UPS-ի<br>Լարումը 12Վ<br>ՈՒնակությունը 6,5Աժ-7,5Աժ<br>Չափերը 106մմ x 70մմ x 90 մմ<br>Մարտկոց SHR1227W, 12Վ 6,5Աժ-7,5Աժ, | հատ | 8900 | 178000 | 20 | | 20 | 30.06.2018 թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 106մմ x 70մմ x 90մմ, կամ համարժեքը: Արտադրության ժամկետը ոչ ավել քան 6 ամիս: Երաշխիքը 3 տարի: Երաշխիքը 3 տարի: | | | | | | | |
| 24 | 31442100/7 | Կուտակիչ մարտկոցներ՝12վ գելային fgFORTE s.r.o. | *fgFORTE* ***Չեխիա*** | P3D Կայանի, UPS-ի մարտկոց 12Վ 75Աժ Գելային մարտկոցներ՝ ստացիոնար, կապարաթթվային, հերմետիկ, գերճնշման փականի կարգավորմամբ՝ չսպասարկվող: Տեխնոլոգիա- VRLA GEL Քաշը, կգ - ոչ պակաս քան 22,5 Չափսերը (երկարություն x լայնություն x բարձրություն) - 260 x168 x211/214մմ; M6 - սեղմակով: Մարտկոցի ունակությունը - 75 Աժ Պիտանելիության ժամկետը՝ ոչ պակաս քան - 12 տարի: **Երաշխիքային ժամկետը՝ հանձման - ընդունման ԱԿՏԸ ստորագրման օրվանից - մեկ տարի:** Ներքին դիմադրությունը -7,0 մOhմ Եվրոպական հավաքում: ԱՐՏԱԴՐՈՂԻ ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ ներկայացվում է հանձնման - ընդունման ԱԿՏի հետ: **Արտադրման** | հատ | 132000 | 8448000 | 64 | | 64 | 30.06.2018 թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **տարեթիվը - 2018թ.**<br>6FG75 (12Վ 75Աժ) կամ համարժեքը<br>Փաթեթավորումը՝ գործարանային: | | | | | | | |
| 25 | 31442100/27 | Կուտակիչ մարտկոցներ՝12վ 65 Աժ<br>Exide Industries LTD | ***INDEX Հնդկաստան*** | Լարումը ոչ պակաս քան 12Վ<br>Ունակությունը ոչ պակաս քան 65 Աժ<br>Մեկնարկի հոսանքը ոչ պակաս 630Ա<br>Սեղմակները կոնաձև<br>Չափերը 245x175x190մմ(երկ.xլայն.xբարձր)<br>բևեռների դիրքը -/+ (0) (մեջընկած)<br>Ապրանքի արտադրման, և կամ թողարկման ժամկետը մատակարարման պահին պետք է լինի ոչ ավել քան 3(երեք) ամիս, նոր՝ չօգտագործված:<br>Մարտկոցները պետք է ունենան աշխատունակության ցուցիչ(индикатор).<br>Նշված բարձրությունը պետք է լինի սեղմակների(клеммы) հետ միասին (սեղմակները՝ հավասար կամ բարձրությունը չգերազանցող),<br>Ծծմբաթթվի լցոնման անոթների խցանները բացվող: | հատ | 34000 | 68000 | 2 | | 2 | 30.06.2018թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | 31442100/23 | Կուտակիչ մարտկոցներ՝1 2վ 7 Աժ Shenzhen center power tech co ltd | ***Security Force*** ***Չինաստան*** | Նախատեսված է UPS-ի համար՝ չսպասարկվող կապարաթթվային, սնուցման լարումը՝ 12 Վ, ունակությունը՝ 7 Ա/ժ: Չափերը - 151x65x94մմ: Ֆաստոն սեղմակով: Արտադրման տարեթիվը՝ 2018թ.-ից ոչ շուտ: Փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 5584 | 670000 | 120 | | 120 | 30.06.2018 թ |
| 27 | 31442100/16 | Կուտակիչ մարտկոցներ՝ 12վ 12 Աժ Exide Industries LTD | ***INDEX*** ***Հնդկաստան*** | Նախատեսված է UPS-ի համար՝ չսպասարկվող, ապարաթթվային, սնուցման լարումը՝ 12 Վ, ունակությունը՝ 12 Ա/ժ: Չափերը - 98 x 150 x 100 մմ: Ֆաստոն սեղմակով: Արտադրման տարեթիվը՝ 2018թ.-ից ոչ շուտ: Փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 12900 | 541800 | 42 | | 42 | 30.06.2018 թ |
| 30 | 31442100/20 | Կուտակիչ | ***DT*** | Կապարա թթվային | հատ | 16000 | 160000 | 10 | | 10 | 30.06.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մարտկոցներ՝ 6 վ 4 Աժ<br>Shenzhen center power tech co ltd | *Չինաստան* | հերմետիկ կուտակիչ<br>ՈՒնակությունը – 4 Աժ<br>Լարումը – 6Վոլտ<br>Չափերը - 150 x 60 x 100 մմ<br>Ծառայության ժամկետը – 5 տարի<br>Շահագործման միջավայրի ջերմաստիճանը՝ -20°C → +60 ° C<br>Արտադրության եվ պիտանելիության ժամկետների նշումով<br>Արտադրման տարեթիվը՝ 2018թ.-ից ոչ շուտ:<br>Փաթեթավորումը՝ գործարանային: | | | | | | | թ |

**ԳՆՈՐԴ**
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

------------------------Ա.Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Վարմէքս» ՍՊԸ
Երևան, Տիգրան Մեծի 46 4
Հ/Հ 2050022329031001 ՀՀ դրամ
Ինեկոբանկ
ՀՎՀՀ 00407187
Տնօրեն

------------------------Մ. Խաչատրյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«05» 05 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 31442100/14 | *Կուտակիչ մարտկոցներ՝ հերմետիկ EXIDE*<br>GNB Industrial power | | | | | | | 672000 | 672000 | 672000 | 672000 | 672000 | 672000 | 672000 |
| 2 | 31442100/13 | Կուտակիչ մարտկոցներ՝ 105 Աժ<br>Exide Industries LTD | | | | | | | 49000 | 49000 | 49000 | 49000 | 49000 | 49000 | 49000 |
| 3 | 31442100/6 | Կուտակիչ մարտկոցներ՝ 190 Աժ<br>Johnson Controls | | | | | | | 845000 | 845000 | 845000 | 845000 | 845000 | 845000 | 845000 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 31442100/12 | Կուտակիչ մարտկոցներ՝ AGM Shenzhen center power tech co ltd | | | | | | 712000 | 712000 | 712000 | 712000 | 712000 | 712000 | 712000 |
| 5 | 31442100/25 | Կուտակիչ մարտկոցներ՝VRLA AGM EH Europe GmbH | | | | | | 654000 | 654000 | 654000 | 654000 | 654000 | 654000 | 654000 |
| 11 | 31442100/22 | Կուտակիչ մարտկոցներ՝ UPS-ի 5Աժ Shenzhen center power tech co ltd | | | | | | 137600 | 137600 | 137600 | 137600 | 137600 | 137600 | 137600 |
| 15 | 31442100/17 | Կուտակիչ մարտկոցներ՝65 Աժ Exide Industries LTD | | | | | | 68000 | 68000 | 68000 | 68000 | 68000 | 68000 | 68000 |
| 23 | 31442100/5 | Կուտակիչ մարտկոցներ՝6.5 Աժ-7.5 Աժ Shenzhen center power tech co ltd | | | | | | 178000 | 178000 | 178000 | 178000 | 178000 | 178000 | 178000 |
| 24 | 31442100/7 | Կուտակիչ մարտկոցներ՝12վ գելային fgFORTE s.r.o. | | | | | | 8448000 | 8448000 | 8448000 | 8448000 | 8448000 | 8448000 | 8448000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | 31442100/27 | Կուտակիչ մարտկոցներ՝12վ 65 Աժ Exide Industries LTD | | | | | | | 68000 | 68000 | 68000 | 68000 | 68000 | 68000 | 68000 |
| 26 | 31442100/23 | Կուտակիչ մարտկոցներ՝12վ 7 Աժ Shenzhen center power tech co ltd | | | | | | | 670000 | 670000 | 670000 | 670000 | 670000 | 670000 | 670000 |
| 27 | 31442100/16 | Կուտակիչ մարտկոցներ՝ 12վ 12 Աժ Exide Industries LTD | | | | | | | 541800 | 541800 | 541800 | 541800 | 541800 | 541800 | 541800 |
| 30 | 31442100/20 | Կուտակիչ մարտկոցներ՝ 6 վ 4 Աժ Shenzhen center power tech co ltd | | | | | | | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 | 160000 |

ԳՆՈՐԴ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

-------------------------Ա.Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Վարմէքս» ՍՊԸ
Երևան, Տիգրան Մեծի 46 4
Հ/Հ 2050022329031001 ՀՀ դրամ
Ինեկոբանկ
ՀՎՀՀ 00407187
Տնօրեն

--------------------------Մ. Խաչատրյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
«  » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ ______________
հվհհ ______________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ ______________
հվհհ ______________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »           20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ    N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________ (Գնորդի անվանումը) -ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________ (Վաճառողի անվանումը) (այսուհետ՝ Վաճառող) միջև 20     թ. ______________ (պայմանագրի կնքման ամսաթիվը) -ին կնքված N ______________ (պայմանագրի համարը) պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն